ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE66-C00F-4D4D-9745 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/11939/02/25 ք. Երևան
12 Նոյեմբերի 2025թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով «ԷՄՀԱՐ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/73» ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2025թ. հոկտեմբերի 22-ի N 1 որոշմամբ հրապարակված Հրավերի 5-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրի որոշակի պահանջներն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը նշանակելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

հայցվորի ներկայացուցիչը 05.11.2025 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով այսուհետ նաև՝ Համակարգ հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/73» ծածկագրով

գնման ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2025թ. հոկտեմբերի 22-ի N 1 որոշմամբ հրապարակված Հրավերի 5-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրի որոշակի պահանջներն անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Ներկայացված հայցադիմումը 06.11.2025 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամայյանին և Համակարգի միջոցով հասանելի է դարձել 07.11.2025 թվականին:
I. Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
II. Հաշվի առնելով, որ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ առողջապահության նախարարությունից պահանջել ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/73 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
III. Ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներից և հայցի հիմքում դրված փաստերի առանձնահատկություններից՝ Դատարանը կարծում է, որ գործի քննությունը պետք է իրականացնել գրավոր ընթացակարգով:
IV. Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.9-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. «ԷՄՀԱՐ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/73» ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2025թ. հոկտեմբերի 22-ի N 1 որոշմամբ հրապարակված Հրավերի 5-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրի որոշակի պահանջներն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. ՀՀ առողջապահության նախարարությունից պահանջել ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/73 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,
3. որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում
4. եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
5. Գործի քննություն իրականացնել գրավոր ընթացակարգով:
6. Պատասխանողին պարզաբանել, որ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը

կրում է նա, իսկ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացվել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

7. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

8. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Ազատ Դունամայյան

ՎԱՎԵՐԱԳՐՎԱԾ Է
ԴԱՏԱՎՈՐ
Ա. ԴՈՒՆԱՄԱՅՅԱՆԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am